լուխ շաքար էր ղրկել։ Նվիրակ Սուքիաս եպիսկոպոսն մէկ գլուխ շաքար և մէկ լիտր խնձոր էր ուղարկել պարգեւ։ Երեցփոխ աղա Քարամն մէկ գլուխ շաքար և կէս ֆունդ դայֆայ։ Փետրուարի 6ին շամախէցի աղա պետրոս Ներսէսեանն եկին մեզ տեսութիւն, ընծայ էր բերել մէկ գլուխ շաքար և մէկ ֆունտ չայ. Աստուած շէն պահէ։

Ծաղկազարդ կիրակի օր զԲրիստոս պատարագեցի 3 մանէթ ժամուց եկն, երկուսն ետու կարօտելոց և մէկն ինձ խարճի։ Մարտի 25ն չինովնիկ աղա Ղեւոնդ Վարդանեանն զատկական բաժին մեզ համար չորս զուլթիի ձուկն և մէկ տօպրակ խավեար էր ուղարկել Աստուած շէն պահէ։ Զատկի կիրակի օրն ունէլի մէկ գառն խօրովու արի, գիւղացուց հետ վայելեցինք, և փառս մատուցի պարգեւողին բարեաց։ Ապրիլի 1ին եկն Յօսէփ արքեպիսկոպոս և կավալէրն ի Սաղիան քննութիւն եկեղեցականաց. միւս օրն գնաց Շամախի, ընդ իւր բերած էր Ճալէթու յաջորդ Սարգիս վարդապետն որ տարաւ հետն Շամախի. սոյն Սարգիս վարդապետս մեզ համար բերել էր մէկ լիտր շամբալիտ և մէկ շուշայ ռոմ. շէն կենայ։

Յօսէփ եպիսկոպոսն Շամախու մեզ համար բերէր 2 գլուխ շաքար և մէկ ֆունտ չայ. ապրիլի 16ին գնաց դէպ Շաքի. Շամախու քանի մի իշխանք էլին եկած ընդ Յօսէփ եպիսկ. ճանապարհ ձգելու. մեզ ետուն աջահամբոյր, որք են սոքա Կաճկաճով խաչատուրն ետ մէկ ոսկի, աղա պետրոսն մէկ ոսկի, երեցփոխ քարամն 3արուութիւնն երկու մանէթ, Մէսարու յուզբաշի յարութիւնն մէկ մանէթ. Աստուած իւրեանց վարձատրէ, փոխանակ միոյն հազար պարգեւէ. ամէն։ 8ունիսի 2ին Սաղիանու բերել տուի տասը գրվանքայ լաւ զուլ բարձ և գոշակի համար վեց մանէթ վարձ ավի։ 5ն յունիսի յաջորդ պետրոս վարդապետին հանեցին յաջորդութիւնից, ի տեղին նորին կարգեցին վէքիլ գանձակեցի տէր Դանիէլն մինչեւ ցնոր յառաջնորդ գալն։ 25 յունիսի յաջորդ պետրոս վարդապետն գնաց Սուրբ Էջմիածին։ Դասպար բէկն մեզ մէկ գառն էր ուղարկել յունիս 22ին և 20 խիար շէն կենայ։ 4 յուլիսի շամախից Գէորգ աղա Գոկչայովն իւր որդի 8ակոբ պատանիկն ուղարկել էր վանքս ուխտ թօփալիս